ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

10 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆ Ն 30-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով և հաշվի առնելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1.Ապարան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 10-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

2. Ապարան համայնքի 2023թ. տարեկան աշխատանքային պլանում/ՏԱՊ/ փոփոխություններ, լրացումներ կատարելու և մեկ անձից գնում կատարելու համաձայնություն տալու մասին:

(զեկուցող՝ Հ.Մկրտչյան)

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» Պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) համար «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ից (այսուհետ՝ Լիզինգատու) լիզինգի միջոցով 2022 թվականի արտադրության Միտսուբիշի (Mitsubishi L200) տրանսպորտային միջոց ձեռք բերելու մասին:

(զեկուցող՝Հ.Մկրտչյան)

Ավագանի՝ (կողմ-13) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Կարապետյան Կարեն
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա.Գ.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

10 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 31-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ (ՏԱՊ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 04.05.2017թ. ՀՀ կառավարության N526-Ն որոշման 23-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Ապարան համայնքի 2023թ. տարեկան աշխատանքային պլանում կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Տալ համաձայնություն՝ Ապարան քաղաքի Ծովակալ Իսակովի 2 և 4 հողամասերին հարակից Մարշալ Բաղրամյան փողոցի վրա գտնվող հենապատի կառուցման նպատակով նախահաշվի կազման, աշխատանքների կատարման և գնման ընթացակարգերը կազմակերպելու մեկ անձից:
3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (կողմ-13) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Կարապետյան Կարեն
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա.Գ.Կարապետյան

Հավելված
Ապարան համայնքի ավանագու
20.12.2022 թ N 164-Ա որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ապարան համայնքի ավանագու
10.04.2023 թ N 31-Ա որոշմամբ

Ապարան համայնքի 2023թ. տարեկան աշխատանքային պլան

(Փոփոխություններ և լրացումներ)

N	Ծրագրի բովանդակությունը	Բնակավայր	Ծավալ քանակ		Ծրագրի արժեքը հազ. դրամ	
			Նախատեսված	Փոփոխված	Նախատեսված	Փոփոխված
7. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսության բնագավառ						
	Մշակույթի տան մուտքի վերանորոգում	Շենավան		84քմ	X	5 000 000
	Մ. Բաղրամյան փողոց Մ3 միջպետական ճանապարհի վրա ԿՄ 72+00-Կմ73+00 հատվածում մայթերի բերակարգում և վերակառուցում	Ք. Ապարան		Կանաչապատում գազոնով՝ 2000քմ Մայթեզրային ասֆալտ՝ 2000քմ Մայթեզրային բազալտե և բետոնե եզրաքարեր՝ 3000քմ	x	25 000 000
	Ծովակալ Իսակովի 2 և 4 հողամասերին հարակից Մ. Բաղրամյան փողոցի վրա գտնվող հենապատի կառուցում և կանաչապատում	Ք. Ապարան				20 000 000

Աշխատակազմի քարտուղար՝ Ի.Թադևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 32-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԻՄՆԱՐԿ) ՀԱՄԱՐ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ-ԻՑ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԼԻԶԻՆԳԱՏՈՒ) ԼԻԶԻՆԳԻ ՄԻՋՈՑՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՏՍՈՒԲԻՇԻ (MITSUBISHI L200) ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի պահանջներով, Ապարան համայնքի աշխատանքները պատշաճ և արդյունավետ իրականացնելու նպատակով խիստ անհրաժեշտություն է առաջացել լիզինգի միջոցով ձեռք բերելու ծառայողական ամենագնաց մեքենա:

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1.Լիզինգատուի հետ Լիզինգատուի կողմից առաջարկվող/Լիզինգատուի իրավասու մարմնի կողմից որոշված պայմաններով (այդ թվում նաև՝ տոկոսադրույք, Լիզինգային վճար նախավճար, տուժանք և այլն) Գույքը սեփականության իրավունքով ձեռք բերելու պայմանով տոկոսադրույքով կնքել 10,500,000(տասը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով, ընդ որում՝ գումարի չափի ավելացման հնարավորությամբ՝ պայմանավորված այդ թվում նաև՝ լիզինգի առարկայի ձեռքբերման հետ կապված ծախսերի /ներառյալ՝ ձեռքբերման պայմանագրով նախատեսված ինդեքսավորման, ներմուծման, փոխադրման ու մատակարարման ծախսերի/ և/կամ փոխարժեքի տատանմամբ և/կամ արժութային փոխարկմամբ, մինչև 36 ամիս ժամկետով (ժամկետի հաշվարկը սկսվում է Լիզինգի պայմանագրի շրջանակում հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից) լիզինգի պայմանագիր (որոշման մեջ հիշատակվելու դեպքում, այսուհետ նաև՝ Լիզինգի պայմանագիր)՝ապահովելով տոկոսադրույքի, լիզինգային վճարների, նախավճարի և Լիզինգի պայմանագրով (ներառյալ՝ հավելվածներով, հանձման-ընդունման ակտով) նախատեսվելիք այլ վճարումների պատշաճ կատարումը, որի շրջանակներում Հիմնարկի կողմից ընտրված վաճառողից Լիզինգատուն ձեռք է բերելու 15,000,000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ արժեքով և Հիմնարկի կողմից որոշված MITSUBISHI L200 մակնիշի, թվով 1(մեկ) տրանսպորտային միջոցը (այսուհետ նաև՝ Գույք) և Լիզինգի պայմանագրով սահմանված պայմաններով և օգտագործման ու տիրապետման/լիզինգի իրավունքով հանձնվելու է Հիմնարկին, իսկ Հիմնարկը ընդունելու է այդ գույքը:

2.Կնքել/ստորագրել Լիզինգի պայմանագրի հավելվածները և (կամ) լիզինգի պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելու համաձայնագրերը և ստորագրել վերջինիս կնքման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Համաձայնություն տալ լիզինգի գումարի փոփոխմանը լիզինգի գումարի մեջ ներառվող վճարների և ծախսերի չափի փոփոխությամբ, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված, փոփոխված չափին համապատասխան:

3.Երաշխավորել Ապարանի համայնքապետարանի կողմից Գույքի ձեռքբերման և պատասխանատվություն ստանձնել Լիզինգի պայմանագրի բոլոր կետերը ժամանակին կատարելու համար:

4.Հանձնարարել Հիմնարկի ղեկավար Կարեն Եղիազարյանին հանդես գալ Հիմնարկի անունից Լիզինգատուի մոտ, ստորագրել/կնքել վերը նշված բոլոր պայմանագրերը նշված պայմաններով, ինչպես նաև Լիզինգատուի կողմից առաջարկած/առաջարկվող այլ պայմաններով ու տեքստով ըստ իր հայեցողության, Հիմնարկի անունից կատարել ցանկացած գործողություն, որն անհրաժեշտ կլինի սույն որոշմամբ ամրագրված գործարքի իրականացման համար:

Ավագանի՝ **(կողմ-13)** **(դեմ-0)** **(ձեռնպահ-0)**

Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Կարապետյան Կարեն
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Գեղամյան Խաչիկ
Մանուկյան Աղաբեկ
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Սարգսյան Սուրեն
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ **Ա.Գ.Կարապետյան**